

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2018 թվականի հոկտեմբերի 24-ին կայացած նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 29-ը (ցուցակը կցվում է)

Նախքան խորհրդի նիստի բացումը Խորհրդի նախագահ Մ.Ա.Գրիգորյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2018/2019 ուստարվա ընթացիկ քննությունների կազմակերպում ֆակուլտետում
/զեկ. փոխդեկան Ա.Թ.Գրիգորյան/
2. ԵՊՀ 100 ամյակին նվիրված «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները»
կոնֆերանսի կազմակերպման և անցկացման արդյունքները
/զեկ. Թ.Գ.Վարդանյան/
3. ԵՊՀ 100 ամյակին նվիրված «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները»
կոնֆերանսի զեկույցների հրատարակման խմբագրական կազմի հաստատում
/զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/
4. Ընթացիկ հարցեր

1. **ՀՄԵՑԻՆ** Փոխդեկան Ա.Գրիգորյանի հաղորդումը 2018/2019 ուստարվա ընթացիկ քննությունների կազմակերպման վերաբերյալ: Ա.Թ.Գրիգորյանը մանրամասնորեն ներկայացրեց ընթացիկ քննությունների ժամանակացույցները: Իր խոսքում Ա.Գրիգորյանը նշեց, ընթացիկ քննությունների ժամանակահատվածում դասընթացներից ազատվելու փաստը: Ա.Գրիգորյանը դասախոսական անձնակազմին կոչ արեց անցկացնել քննություններն ըստ ժամանակացույցի: Նշեց նաև «Աշխարհագրություն» մասնագիտության 4-րդ կուրսի ընթացիկ քննությունների 1 շաբաթ ավելի ուշ կայանալու փաստը՝ մանկավարժական պրակտիկայի անցկացման հետ կապված:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանը, ով մեծ պատասխանատվություն դրեց ամբիոնի վարիչների վրա ընթացիկ քննություններին հետևելու և ուշադրության կենտրոնում պահելու հարցում ինչպես նաև հանձնարարեց հետևողական լինել կարճ ժամանակում արդյունքների գրանցմանը: Իր խոսքում Մ.Գրիգորյանը անհրաժեշտություն համարեց ուսանողներին գնահատականները նախապես տեղեկացնելը, որից հետո միայն գրանցեն տեղեկագրերում:

Թ.Վարդանյանը ելույթում կոչ արեց դասախոսներին հարցատոմսերը կազմելիս առաջնորդվեն ուղղեցույցերում նշված քննական առարկայի համապատասխան ձևաչափով:

Պ.Դավթյանն առաջարկեց կուրսատորների վրա դնել 1-ին կուրսեցիներին քննությունների անցկացման ձևին և ընթացքին ծանոթացնելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

2. ԼՍԵՑԻՆ. Թ.Վարդանյանին ԵՊՀ 100 ամյակին նվիրված «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները» կոնֆերանսի կազմակերպման և անցկացման արդյունքների վերաբերյալ: Նա խոսեց կոնֆերանսի վերաբերյալ եղած արձագանքներից: Թ.Վարդանյանը ցավով նշեց գիտաժողովի քիչ լուսաբանված լինելու փաստը: Ելույթում Թ.Վարդանյանը նշեց, որ կազմկոմիտեն կանգնած է լավագույն հոդվածներն ընտրելու խնդրի առջև: Հաղորդողը կոչ արեց սեկցիայի ղեկավարներին սրտացավ մոտենալ դրված հարցին և հետևել առաջադրված ձևաչափին: Շատ կարևորեց սեկցիայի ղեկավարների և խմբկոլի աշխատանքը, ինչն իր հերթին կբերի որակյալ հոդվածներ, հետևաբար նաև՝ որակյալ ժողովածու թողարկելուն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Վ.Վարդանյանը բարձր գնահատեց կազմկոմիտեի կողմից կատարած մեծ աշխատանքը: Առաջարկեց զեկուցումների ժողովածուն ներկայացնել ԵՊՀ-ի Գիտ.խորհուրդ տպագրության համար երաշխավորություն ստանալու նպատակով:

Մ.Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց Թ.Վարդանյանին և կազմկոմիտեի պատասխանատու քարտուղար Եսթեր Մանուկյանին, կատարած աշխատանքի համար, կոնֆերանսը բարձր մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար:

Նա իր շնորհակալությունը հայտնեց ռեկտորատին գիտաժողովի կազմակերպման հարցում ցուցաբերած աջակցության համար: Ելույթում Մ.Գրիգորյանը կարևորեց այն փաստը, որ գիտաժողովը հնարավորություն տվեց ընդլայնելու գիտական համագործակցության շրջանակները ինչպես նաև խորացնելու և ակտիվացնելու առկա փոխհամագործակցությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Դիմել ռեկտորատին կազմկոմիտեի ի շարք անդամներին հայտնել շնորհակալություն՝ կատարած աշխատանքի համար:

3. ԼՍԵՑԻՆ. Դեկան Մարատ Գրիգորյանի հաղորդումը ԵՊՀ 100 ամյակին նվիրված «Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները» կոնֆերանսի զեկույցների հրատարակման խմբագրական կազմի հաստատման վերաբերյալ /կազմը կցվում է/:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Թ Վարդանյանն առաջարկեց ժողովածուի մեջ նշել առանձին խմբագրական կազմն ըստ համապատասխան սեկցիաների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանը տպագրված հոդվածների որակի պատասխանատվությունը ամբողջությամբ դրեց խմբկոմի անդամների վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ. հաստատել ներկայացված խմբագրական կազմը:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ. Մոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ն.Հարությունյանի հաղորդումը նույն ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Վահան Ակսելի Պոտոսյանի «ՀՀ սահմանամերձ և լեռնային տարածքներում տարաբնակեցման տեղական համակարգերի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները» (ԻԴ.03.01 Աշխարհագրություն) թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրում փոփոխություն կատարելու հարցի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Թ.Վարդանյանը, իր խոսքում փորձեց ճշտել բարձունքային նիշի ճշտությունը՝ վերնագրում փոփոխությունը հիմնավորելու նպատակով:

Ա.Ավագյանը նշեց, որ թեմայի վերնագրում անհրաժեշտ է կատարել խմբագրական փոփոխություն՝ ուսումնասիրման ոլորտն ամբողջապես արտացոլելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի առկա ուսուցման 3-րդ տարվա ասպիրանտ Վահան Ակսելի Պոտոսյանի գիտական թեման հաստատել «Տարաբնակեցման զարգացման հիմնախնդիրները ՀՀ սահմանամերձ, լեռնային ու բարձր լեռնային տարածքներում» (ԻԴ.03.01 Աշխարհագրություն) վերնագրով:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան